



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

26 դեկտեմբերի 2018 թվականի N 212-Ա

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշումը, ինչպես նաև *Ա. Գասպարյանի* անձնական դիմումը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Անսարոյի Գասպարյանին* տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից՝ ինն աշխատանքային օր, 2019 թվականի հունվարի 8-ից մինչև հունվարի 18-ը ներառյալ:

2. *Անսարոյի Գասպարյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ *Եղսան Աթանեսյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2018 թվականի դեկտեմբերի 26
ք. Հրազդան



Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ